

### **5.5. 2012 թվականի հուլիս ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, ՀՀ շրջակա բնական միջավայրը 2012թ. հուլիսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**5.5.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում:** Հուլիսին ՀՀ մթնոլորտի աղտոտվածության որակի մշտադիտարկում իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան և Արարատ քաղաքներում տեղակայված 14 դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 145 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 19 930 փորձանմուշ:

**Երևան քաղաքի** մշտական 5 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 384 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.4 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.3 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանի միջոցով որոշվել է ծծմբի երկօքսիդի պարունակությունը: Ավտոմատ սարքի միջոցով ծծմբի երկօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5 222 դիտարկում: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում: Քաղաքի պասիվ նմուշառման 15 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 56 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Գյումրի քաղաքի** մշտական դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 21 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ: Հունիս ամսվա համեմատությամբ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 240 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ:

**Վանաձոր քաղաքի** մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 186 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 240 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ:

**Ալավերդի քաղաքի** 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 186 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների

սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4161, ազոտի օքսիդների համար՝ 456 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 18 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 179 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ:

**Հրագոյան քաղաքի** մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 69 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական և միանվագ առավելագույն կոնցենտրացիաները ՄԹԿ-ն գերազանցել են 3.0-ական անգամ: Հունիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 72 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.8 անգամ:

**Արարատ քաղաքի** մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 31 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ: Հունիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.6 անգամ:

**Ծաղկաձոր քաղաքի** պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 84 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5 268, ազոտի օքսիդների համար՝ 918, ծծմբի երկօքսիդի համար՝ 1 399 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերից ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ:

**Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների** պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 12 և 10 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 91, 72 և 40 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ամբերդ գյուղում** ավտոմատ եղանակով վերցվել է օդի 90 և փոշու 30 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի պարունակության որոշման համար անընդմեջ ռեժիմով կատարվել է 435 դիտարկում: Գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 3.9 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև)  
վերահսկվող նյութերի պարունակությունը, 2012թ. հուլիս

մգ/դմ<sup>3</sup>

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը					
	02	04	08	10-11	14-15	30
Զրաձնային ցուցիչ (pH)	6.87	7.20	7.22	7.78	7.36	7.05
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՄմ/սմ)	12.2	50.7	57.4	68.1	29.1	14.4
Սուլֆատ իոն	0.94	4.23	5.21	5.53	1.49	1.05
Քլորիդ իոն	0.06	2.00	0.61	0.21	0.12	0.05
Նիտրատ իոն	0.73	4.65	6.30	3.09	1.67	1.05
Ամոնիում իոն	0.84	1.30	2.46	0.73	0.59	0.57

**5.5.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում:** Հուլիսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է ՀՀ 29 գետերի, Արփիլձի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Կեչուտի ջրամբարների և Երևանյան լճի 80 դիտակետերում: Վերցված 80 փորձանմուշներում որոշվել է 18-21-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2012թ. հուլիս

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները						
			լուծված թթվածին, մգ/դմ <sup>3</sup>	սուլֆատ իոն, մգ/դմ <sup>3</sup>	նիտրիտ իոն, մգN/դմ <sup>3</sup>	ամոնիում իոն, մգN/դմ <sup>3</sup>	ֆոսֆատ իոն, մգ/դմ <sup>3</sup>	ԹՎՊ, մգ/դմ <sup>3</sup>	ԹՔՊ, մգO/դմ <sup>3</sup>
Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	3.5	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	-	-	-	-	-	3.5	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	-	0.057	3.884	-	4.5	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	3.3	-
	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	-	-	-	0.443	-	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	-	0.649	-	-	-
Չորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	3.1	-
	10	Գետաբերան	-	-	-	-	-	3.6	-
Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.991	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	654.6	-	0.533	-	-	-
Աղստև	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	-	-	0.021	-	-	3.4	-
	17	ք.Բջնանից 1 կմ վերև	-	-	0.027	-	-	-	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	0.028	-	-	-	-
Գետիկ	20	Գետաբերան	-	-	0.031	0.461	-	-	-
Արաքս	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	150.5	-	-	-	-	-
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	154.2	-	-	-	-	50
Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	5.41	-	-	-	-	5.4	-
	32	Ամասիա գյուղից 1 կմ ներքև	-	-	-	-	-	3.4	-
	33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	-	-	-	-	-	4.0	-
	34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	-	-	0.272	2.256	-	4.4	-
Աշոցք	36	Արտաշեն գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	3.7	-
	37	Գետաբերան	-	-	-	-	-	3.6	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները						
			լուծված թթվածին, մգ/դմ <sup>3</sup>	սուլֆատ իոն, մգ/դմ <sup>3</sup>	նիտրիտ իոն, մգN/դմ <sup>3</sup>	ամոնիում իոն, մգN/դմ <sup>3</sup>	ֆոսֆատներ, մգ/դմ <sup>3</sup>	ԹԿՊ <sub>5</sub> , մգ/դմ <sup>3</sup>	ԹՔՊ, մգO/դմ <sup>3</sup>
Կարկաչուն	38	Գետաբերան	5.49	221.5	0.242	1.487	-	3.9	34
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	5.84	297.4	0.025	-	-	-	-
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	5.09	199.2	0.222	0.862	-	4.9	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	183.2	0.069	-	-	-	-
Քասախ	43	ք.Ապարանից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	3.3	-
	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	-	-	0.044	3.841	-	4.5	-
	45	ք.Աշտարակից 1 կմ վերև	-	-	-	-	-	3.1	-
	46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	-	-	-	-	-	4.5	-
	47	Գետաբերան	-	-	0.119	-	-	-	-
Գեղարոտ	49	Գետաբերան	-	-	0.081	0.409	-	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	4.180	-	-
	53	Արզել գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	5.398	3.1	-
	54	Արզնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	-	-	-	4.157	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	1.20	-	-	22.307	-	20.0	42
	56	Գետաբերան	4.31	136.1	0.107	2.410	-	-	-
Մարմարիկ	57	Հանքավան գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	7.799	-	-
	58	Գետաբերան	-	-	-	-	8.431	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	372.8	0.264	5.552	-	5.9	-
Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	5.85	-	-	-	-	-	-
	90	Գետաբերան	5.79	-	-	-	-	-	-
Արծվանիկ	96	Գետաբերան	5.85	120.7	0.020	-	-	-	-
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	3.1	-
	101	ք.Սիսիանից 2 կմ ներքև	-	-	0.076	-	-	-	-
Սիսիան	104	Գետաբերան	-	-	-	-	-	3.3	-
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	-	0.898	-	-	12.7	-
Արփիլճի ջրամբար	109	Ամբարտակի մոտ	5.62	-	-	-	-	-	-
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	-	-	0.051	-	-	-	-
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	-	-	-	-	-	4.5	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	5.49	-	0.118	0.593	-	4.5	-
Ագատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	5.74	-	-	-	-	3.7	-
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	-	-	-	-	-	3.6	-
Ծառաղբյուր	312	ք.Ծաղկաձորից ներքև	-	-	0.103	-	-	-	-